

հայերը՝ կատարեն իրենց գիտաւորութիւնը՝
 «Երիտասարդ հայերը» ձեռնարկել են մի
 մեծ գործի՝ Օրմանեան Սրբազանը անշուշտ կը
 մտածէ թէ՛ չխանդարենք նրանց մեր միջամտու-
 թեամբ, հնարաւորութիւն տանք մեր ձեռնպա-
 հութեամբ, որ նրանք վերագառնան կամ չվա-
 հանով կամ վահանի վրայ» և կամ պարզ երեսով
 ազգի և պատմութեան մէջ խայտառակուած:

Այդ տեսակէտից Արշարունի պատրիարքի
 յաջորդը չի կարող լինել Օրմանեանը, այլ ամե-
 նահաւանականը և ամենայարմարը Վանի առաջ-
 նորդ Սարաճեան արքեպիսկոպոսը կարող է լի-
 նել, կամ նոյն աշխարհայեացքի տէր եզրոյ մի
 ուրիշ եկեղեցական:

Ս. 2.

1912 ԹՈՒԻ ՌՈՒՍԱՀԱՅ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՌՕՏ
 ՏԵՂԵԿԱԳԻՐ

XIV

ՄԱՄՈՒԼ, ԳՐԱԿԱՆՌԻԹԻՒՆ ԵՆ ԳՐԱՄՕՍՈՒՆ
 ԹՆԻՒՆ

Մ ա մ ու լ .

Տարեհաշիւ կազմողի դրութիւնը դասարանում գրա-
 նուող դասատուի դրութեան նման է. մերթ տրտմել,
 մերթ ուրախանալ. որովհետև լաւ աշակերտի կողքին
 նստած է լինում վատը, ընդունակի մօտ անընդունակը:
 Կեանքն էլ միմեանց հակասող սև ու լուսաւոր հոսանք-
 ներից հիւսուած մի ամբողջութիւն է, որի էութիւնը հաս-
 կանալու դէպքում տրտմութեան ու բերկրանքի զգացում-
 ների յաջորդականութիւնն է իշխում մարդու մէջ: Հայ
 մամուլի այս տարուայ կեանքը աւելի տխուր մտորում-
 ների ազդէր է, որովհետև թէ որակով և թէ քանակով
 նա ոչ միայն չի յառաջագիւտում, այլ պակասում է. Մա-
 մուլի իր բուն նպատակից շեղուելը ապացոյց է, որ հայ
 հասարակութիւնն էլ ինչ որ քաօս վիճակ ունի և մա-
 մուլը եթէ հայելին է հասարակութեան, ապա այդ հայե-
 լում շատ տխուր պատկերներ ենք տեսնում: Միւս կող-
 մից հայ թերթերի թիւը փոխանակ աւելանալու՝ պակա-
 սում է, մասամբ որովհետև ընթերցասիրութեան պահան-
 ջի պակաս չափ կայ մեզանում, մասամբ էլ՝ որովհետև
 մամուլը բաւականութիւն չի տալի եղած պահանջին:
 Ինքը մամուլը շեղուել է յաճախ, որ հասարակութեանը
 աւելի հետաքրքրում է անձնական հաշիւների շուրջը
 պտտող յօդուածները, ընամակ խմբագրութեան»-ներն ու
 այսպէս կոչուած մերկացումները և որքան էլ այդ հետա-

քրքրութիւնը անօգուտ, նոյնիսկ զարգացման տեսակէ-
 տից վտանգաւոր համարենք, այնուամենայնիւ հէնց նոյն
 մամուլն է, որ իր էջերում այդօրինակ նիւթերին մեծ
 տեղ է յատկացնում և մանաւանդ «Մամուլ» կոչուած
 բաժնում աշխատում է իր հակառակորդին յաղթելու դի-
 տաւորութեամբ նրանից աւելի բարձր աղաղակել և աւելի
 տղեղ բռուր շարել. սրբան խրատական, դաստիարակ-
 չական է հասարակութեանը հայնոյանքներով լի յօդուած-
 ներով զբաղեցնել, այդ թող մամուլը նորից յիշէ և լաւ
 մտածէ, որ լրջութեան փոխարէն երբ հասարակութեանը
 անձնական նեղ հոգիներ մաքրող յօդուածներ է տալի,
 իրաւունք չունենայ պահանջելու հէնց իրեն այդ ձևով
 դաստիարակած հասարակութիւնից կորրեկտութիւն, լրբ-
 ջութիւն: Մամուլը դժբաղդաբար առանց բացառութեան
 այս անմիտ ու վտանգաւոր բանակուռի ձևերից այս
 տարի էլ չի հեռացել և նոյնիսկ աւելի է յառաջագիւտել
 Բարոյական-հասարակական դաստիարակութեան այն
 մարգարիտներից օրինակներ, որոնցով մեր մամուլն է
 կերակրում մեր այնքան անպաարատ, այնքան ազնիւ
 խօսքի, մաքուր զգացումի կարօտ հասարակութեանը.
 «Փողոցային սրիկա, քամէլէօն, գրական և քաղաքական
 էտիկան ասիական տմարդի բարբերից է իր սնունդն
 առնում, դօժօշիկ, Իւդաշկա, ստոր, պրօփօկատոր, ողոր-
 մելիներ, մի մարդ, որին կարելի է գնել որպէս կրկնա-
 կօշիկ, որպէս շոր կային»: Լէօի խօսքերից՝ «խմբագրա-
 կան աւանդներ, լրագրական պարագիտներ, ողնածուծի
 բորբոքումից չորացած, ամենացած տեսակի ստութիւն,
 նեղսիրտ հայնոյի, ծամածռութիւններ անող, լեզու ցոյց
 տուող» կային (տես «Հնովիտ» № 30, որ մէկը «Հորիզո-
 նի» №№ 138, 9, 141, 3 և 150-ից հաւաքել է այդ): Այս
 տեսակէտից արժէ ուշադրութիւն դարձնել «Հորի-
 զոն» № 129, Լէօի «Երկու խօսք» յօդուածին, Վ. Փա-
 փազեանի և Տ. Նազարեանի բանակուռին, Գ. Մնգի-
 բարեանի և Լէօի, Լէօի և Հ. Ա. ի, Լէօի և Գարագաշի,
 Վ. Փափազեանի և Միւրդաշիւրի բանակուռիներին կային:
 Եթէ յիշեալ բառերը, որոնք մեծ մասամբ ուղղուած են
 կամ խմբագիրներին կամ անուն հանած գրող գործիչնե-
 րին, ուղիղ են, ապա պէտք է սարսափել, տեսնելով թէ
 սվքեր են մեր հասարակութեան դաստիարակութիւնն
 ստանձնել և սրբան նրանք կարող են մեզ ուղղել. եթէ
 այդ բառերը տեղին չեն, այլ չափազանցութիւններ են
 (և ես անձնապէս ուղղում եմ այս երկրորդ ենթադրու-
 թիւնս ճիշտ լինի) ապա պէտք է տեսնել, թէ սրբան մեր
 դաստիարակները անզուսպ են, իրենց սանձահարել չգի-
 տեն: Երբ դաստիարակ-ուսուցիչը իր սանիկի նկատմամբ
 անիրաւութիւն ու անտակաւութիւն է թոյլ տալի, նա
 պէտք է համօգուած լինի, որ դաստիարակել չի կարող
 ինքը: Երկու դէպքումն էլ մամուլի վարիչները և նրա
 մէջ աչքի ընկնող գրողները իրենց պարտականութիւնը
 լաւ կատարելուց չափազանց հեռու են և շատ ու շատ
 բան ունեն անելու, որ կարողանան իրենց սխալները
 ուղղել:

Կարևոր եմ համարում այստեղ մի առ. մի թուել

մեր ուսուսանող մամուլի օրգանները, որոնց ցուցակն էլ կարող է որոշ չափով գաղափար տալ մեր հասարակական կեանքի ու նրա յառաջադիմութեան մասին:

Թիֆլիզում.

1. «Մշակ»—քաղաքական, գրական լրագիր, 41-րդ տարի, տարեկան գինը 10 ռ. խմբ. Ա. Քալանթար, հրատ. Հ. Առաքելեան, Ա. Քալանթար և Յ. Տ. Մարկոսեան:

2. «Հորիզոն»—հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, 4-րդ տարի, բաժնեգինը 8 ռ., խմբ.-հրատ. Ս. Սահակեան:

3. «Սուրհանգակ»—գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական անկախ լրագիր, 4-րդ տարի, բաժնեգինը 10 ռ., խմբ.-հրատ, Աստ. Երեցեան (այժմ դադարած):

4. «Թաթարալա»—երգիծաբանական - սատիրական պատկերազարդ շաբաթաթերթ, 7-րդ տարի, բաժնեգինը 5 ռ., խմբ.-հրատ. Աստ. Երեցեան:

5. «Հովիտ»—ազգային, հասարակական, գրական շաբաթաթերթ, հրատարակ. 7-րդ տարի, բաժնեգինը 4 ռ., խմբ.-հրատ. Եզնիկ ա. ք. Երզնկեան:

6. «Հասկեր»—մանկական պատկերազարդ ամսագիր, 7-րդ տարի, բաժնեգինը 4 ռ., խմբ.-հրատ, Կատ. Լիսիցեան:

7. «Աղբիւր»—պատկերազարդ ամսագիր մանուկների և պատանիների համար, 30-րդ տարի, բաժնեգինը աշակերտների համար 2 ռ., խմբ.-հրատ. Տ. Նազարեան:

8. «Տարագ»—գեղարվեստական, գրական, հասարակական, քննադատական, քաղաքագիտական պատկերազարդ հանդէս, 20-րդ տարի, «Աղբիւրի» հետ 10 ռ., խմբ.-հրատ. Տ. Նազարեան:

9. «Նոր-Պարոջ»—օրգան կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միութեան, բաժնեգինը անդամների համար 2 ռ., ոչ անդամների համար 4 ռ., պատասխանատու խմբագիր Արտ. Աբեղեան:

10. «Գիւղատնտես»—պատկերազարդ շաբաթաթերթ, 4-րդ տարի, բաժնեգինը 3 ռ., խմբ.-հրատ. Ա. Աթանասեան, սրան կից հրատարակոււմ է՝

11. «Առողջապահիկ»—բաժնեգինը 2 ռ., խմբագիր Բժ. Ն. Մինասեան:

12. Փետր. 8-ին լոյս է տեսնում «Մամուլ» շաբաթաթերթը, առաջադիմական, անաչառ թերթ, շուտով դադարում է:

13. «Ընկեր»—բաժնեգինը 3 ռ., խմբ.-հրատ. զօկ. փիլ. Սեդ. Թառայեան:

14. «Արօր»—գրական, գիտական, գեղարուեստական ամսագիր, 3-րդ տարի, բաժնեգինը 6 ռ., խմբ.-հր. Հ. Առաքելեան:

15. «Գեղարուեստ»—գրական, գեղարուեստական, երաժշտական պատկերազարդ հանդէս, 2 գիրքը 3 ռ., խմբ.-հրատ. Գարեգին Լևոնեան:

16. «Յուշարար» (հոկտեմբերից է վերսկսուում)—թատերական, գրական, գեղարուեստական պատկերազարդ

հանդէս, տարեկան 5 գիրք, բաժնեգինը 5 ռ., խմբ.-հր. Ա. Վրոյր:

17. «Կովկասի լրաբեր»—օրաթերթ, հատը 2 կ., խմբ.-հրատ. Բ. Յարութիւնեան (տարուայ վերջերին է լոյս տեսնում), բաժնեգինը 4 ռ. 50 կ.:

18. «Լուսայ»—գրական, պատմական, հնագիտական ամսագիր, բաժնեգինը 4 ռ., 16-րդ տարի, խմբ.-հրատ. Գիւտ ա. ք. Աղանեան:

Բազում.

19. «Թաւրոն և երաժշտութիւն»—պատկերազարդ հանդէս, բաժնեգինը 2 ռ. 50 կ., խմբ.-հրատ. Անտօն Մայիլեան:

20. Հոկտ. 21-ից լոյս է տեսնում «Եռանդ»—գրական, հասարակական, տնտեսագիտական շաբաթաթերթ, մինչև տարուայ վերջը 60 կ.:

21. «Բագուի Զայն» անունով դեկտեմբերից լոյս է տեսնում մի օրաթերթ:

Ալէքսանդրապօլում.

22. «Ախուրեան»—հասարակական, գրական օրաթերթ, 6-րդ տարի, բաժնեգինը 3 ռ., խմբ.-հրատ. Կար. Ափինեան:

23. «Արագած»—գրական, հասարակական, քաղաքական թերթ, 1 տարի, բաժնեգինը 3 ռ., խմբ.-հրատ. Պետ. Այվազեան: Շուտով դադարում է:

Երեւանում.

24. «Կուան»—քաղաքական, տնտեսական և գրական շաբաթաթերթ, 2-րդ տարի, բաժնեգինը 3 ռ. 50 կ., խմբ.-հրատ. Մուշեղ Բագրատունի:

Վաղարշապատում.

25. «Արարատ»—պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 46-րդ տարի, բաժնեգինը 4 ռ.:

Նոր-Նախիջևանում.

26. «Լոյս»—գրական-հասարակական շաբաթաթերթ, 3-րդ տարի, բաժնեգինը 4 ռ., խմբ. Գ. Ռէիդեան, հրատ. Մ. Շապովալեան:

Աստրախանում.

27. «Մեր կեանքը»—գրական-հասարակական թերթ, լոյս է տեսնում կիրակի օրերը. 1 տարի, բաժնեգինը 3 ռ., խմբ.-հրատ. Աբէլ Ապրէսեան:

Մոսկուայում.

28. «Մարտ»—շաբաթաթերթ, խմբ.-հրատ. Ա. Կայ-ձունի:

Շուշում.

29. «Ղարաբաղ»—գրական, հասարակական, տնտեսական և քաղաքական թերթ, 2-րդ տարի, բաժնեգինը 4 ռ., խմբ.-հրատ. Բժ. Երամիշեան (սեպտեմբերից դադարում է անորոշ ժամանակով):

Ախարայարում.

30. «Ջաւախք»—գրական, հասարակական շարա-
թաթերթ, բաժնեկիւնը 2 ու., խմբ.-հրատ, Վարդան Շահ-
Պարսեան:

Ահա մեր մամուլի քանակը և ով ծանօթ է սրանց՝
նաև որակը: Աւելորդ չեմ համարում յիշել և այն տաճ-
կահայ և այլ տեղերի թերթերը, որոնք ստացում են
մեր խմբագրութիւններում, և որոնցից պէտք է խմբա-
գրութիւնները նիւթ քաղեն մեզ մատակարարելու և գա-
ղափար կազմելու մեր օտարերկրեայ հայրենակիցների
մասին, թէև խմբագրութիւնները շատ քիչ են օգուում
դրանցից և առաւել բանակոխներն են գերադասում.
ճաշակի և հասկացողութեան խնդիր է:

- 1) «Կոչնակ»—Նիւ-Յօրկ, 2) «Տաճար»—Կ. Պօլիս,
 - 3) «Հոսանք»—Կահիրէ, 4) «Բողոք»—Մարդուան, 5)
 - «Հայկունի»—Մարդուան, 6) «Մարմնամարդ»—Կ. Պօլիս,
 - 7) «Շանթ»—Կ. Պօլիս, 8) «Բազմավէպ»—Վենետիկ, 9)
 - «Հանդէս-ամսօրեայ»—Վիէննա, 10) «Անահիտ»—Փարիզ
 - (դտղարած է այժմ), 11) «Հայ գրականութիւն»—Չմիւռ-
 - նիա, 12) «Միութիւն»—Կահիրէ, 13) «Աղաղան»—Թաւ-
 - րիզ, 14) «Կայծեր»—Կ. Պօլիս, 15) «Բժիշկ»—Տրապի-
 - զոն, 16) «Ոստան»—Կ. Պօլիս, 17) «Փարոս»—Իզմիր,
 - 18) «Մալէշ»—Կահիրէ, 19) «Վան-Տոսպ»—Վան, 20)
 - «Կաթուղիկէ-Արձագանք»—Պօլիս, 21) «Վերածնունդ»—
 - Պօլիս, 22) «Կայծ»—Պօլիս: Պօլսում լոյս են տեսնում
- 9-ը օրաթերթ, առաւօտները՝ «Նոր աշխարհ», «Արևելք»,
«Աղատամարտ», «Ժամանակ», «Լուսարձակ», «Մանգու-
մէի էֆքիթ», «Երեկոյեան» «Իւզանդիոն», «Մուրճ» և
«Ծերիտէյի շարքիյէ»:

Բացի ազգային-հասարակական և ընդհանուր պե-
տական խնդիրները, մեր մամուլը զբաղւում է նաև
արտասահմանեան պետական-հասարակական-քաղաքական
հարցերով. առաւելագէտ տեղ է տալի նաև օտար գրա-
կան դէմքերի ու գրուածքների մասին մօտաւոր գաղա-
փար կազմելու հարցին: Յոյց տալու համար, թէ օտար
կեանքից—գրականութիւնից մեզ համար ի՞նչն է աչքի
ընկնողը եղել և մեր մամուլը մեր հասարակութեանը
ինչ խնդիրներ է կարևոր համարել առաջադրել և ծանօ-
թացնել՝ յիշատակեմ օրաթերթերում լոյս տեսած միջանի
յօղուածներ, որոնք մեծ մասամբ թռուցիկ քաղուածական
աշխատանքներ են, որոնցով հայ ընթերցողը պէտք
է գողափար կազմէ օտար կեանքի մասին:

Գրում են՝ Ն. Ա. Իօթրօլիւրովի մահուան 50-ա-
մեակի առթիւ, Գիկկէնսի ծննդեան 100-ամեակի առթիւ,
Ի. Ա. Կօնչարովի ծննդեան 100 ամեակի առթիւ,
Կ. Ֆ. Շերշինսկիի մահուան առթիւ. Բաղիշիի 1749—
1902, Նադսօնի մահուան 25-ամեակի. Ա. Բօրօղինի
մահուան 25-ամեակի, Երաժիշտ և «Կենցաղ Իզօր» օպերայի
հեղինակ Հերցէնի 100-ամեակի, Ամուզսէնի ճանապարհ
հորդութիւն դէպի հարաւային բնեւոր, Միլիւկովի «Ազ-
գութիւն և ցեղ» դասախօսութիւն, Հերցէնը հայ մտա-
ւորականութեան պատմութեան մէջ, Միջազգային կրի-
մինալիստների ուղսական սեկցիայի ժողովի, Մօրիս

Մէտերլինկի և նրա նոր դրամայի, Օսկար Ուայլդի տրա-
գեդիան Լ. Կապլովսկու թարգմանութեամբ. տեխնիկայի
նորագոյն հրաշքը և միլիտարիզմը, Ֆիխտէի ծննդեան
150-ամեակի, Պետալցցու մահուան 85-ամեակի, Գիւրանց
Լիստի, Կայլն Կայլն հարցերի առթիւ: Որքան տարբեր
նիւթեր, որքան անսխտեմ, թէև հետաքրքրական: Առ-
հասարակ ցանկալի կը լինէր ունենալ մի ամապիր, որ
օտար գրականութեան, գեղարուեստի և կեանքին նուի-
րուած լինէր և մեզ ծանօթացնէր գլխաւոր շարժումների
հետ, տար գլուխ գործոց երկերի թարգմանութիւնները,
պարզէր գրական հոսանքները. մենք, ինչպէս մեզ, այն-
պէս և օտարներին, մեզանից աւելի զարգացած ազգերին
չատ քիչ ենք ճանաչում և մեր վայրիվերոյ ու խառնի-
շփոթ ծանօթութիւն ունենալուց է, որ յաճախ մեր
կեանքը ուզում ենք օտարի կեանքի նման ձեւել, թէև ոչ
մեզ ենք լաւ ճանաչում և ոչ օտարին:

Pessimist

ՍՊԻՏԱԿ ԻՄԱՂԻԿԸ

Ըն հաւատը քեզ կապրեցնէ:
Աւետարան

Գարուն էր:

Այն գարուններից մէկը, երբ վերջանում են ցուրտ
ու բուքը և տեղի տալիս կենսատու զուարթ օրերին. երբ
մեռնում է հին, փտած կեանքը և ծնւում նորն ու թար-
մը, երբ մութն անյայտանում է և տեղի տալիս լոյսին,
երբ մեռելութիւնը կորչում, չքւում է և կեանքն է խօ-
սում: Խաւարի տեղ լուսոյ բողբոջներ են ցայտում և
թմրած ու մեռած հոգիները խօսում:

Ձրերը սկսել էին խօսել, ծառն ու թուփը սոսա-
փել: շնջալ, սարն ու լեռը պնտուել, զարգարուել:

Իաշտերը լցուել էին եռփնբանդ ծաղիկներով և
իրենց անուշաբոյր հոտը տարածել, իսկ գառն ու ուլը
մայել, բառաչել: Գեանքն էր, որ այդ պահուն խօսում
էր, իսկ անշարժութիւնը՝ մեռնում, կորչում:

Սև դալուկ, վշտահար հայեացքով Արսէնը նայում
էր այդ կեանքին ու գառն ժպիտը խաղում էր նրա վըշ-
տոս, դժգոյն դէմքին:

Նա զգում էր, որ դաժան մահը իր ցուրտ ու սար-
սափալից կնիքը դրել էր իր ճակատին և վաղ թէ ուշ
ինքը պիտի իջնէր սև, անկնշտ գերեզման:

Անդհութ, անողորմ թոքախտն էր բոյն դրել նրա
կրծքում և շարախնդ կերպով կրծում էր նրա սիրտը և
նրա մտաղ, երիտասարդ կեանքը խաւարեցնում...

Նա պտտահանից դուրս նայեց վշտոտ ու թախի-
ծով լի աչքերով ու խոր, շատ խոր ախ քաշեց, որքան
ներեցին նրա ցաւոտ թոքերը: Մայրն էր, որ մօտը
կանգնած լսեց նրա հաւաչը ու խորը կսկիծով հարցրեց